ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants (Practice File)» անգլերենի ուսումնաօժանդակ ուղեցույցի հրատարակությունը երաշխավորելու** մասին:

Հրատարակության ներկայացված ուսումնաօժանդակ ուղեցույցը նախատեսված է ՀՊՏՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերում ներառված «Մասնագիտական օտար լեզու» առարկայի դասավանդման համար: Այն հիմնված է 2021 թվականին հրատարակված «English for Accountants» (Ս.Ա.Զալաբյան, Լ.Ա.Հարությունյան, Ք.Մ.Թորգոմյան) ուսումնական ձեռնարկի թեմաների վրա, որոնք վերաբերում են հաշվապահության, հաշվետարության, աուդիտի և հաշվապահության տարբեր ճյուղերին: Ուղեցույցը բաղկացած է ուսանողի առաջադիմությունը ստուգող 5 թեստից, որոնք առնչվում են հաշվապահության տարբեր ճյուղերի, աուդիտի, ստեղծարար հաշվապահության, բյուջեի ուսումնասիրության հետ: Այն հարուստ է բազմատեսակ առաջադրանքներով, որոնցից կարելի է ընդգծել բառապաշարի իմացության ստուգմանն ուղղված առաջադրանքները, առաջարկված բազմակի պատասխաններից ճիշտ տարբերակն ընտրելու և տերմինների սահմանումներին վերաբերող առաջադրանքները, թարգմանության հմտությունները զարգացնող վարժությունները, ինչպես նաև ստեղծարար մտքի զարգացումը գրավոր աշխատանքի միջոցով: Ուղեցույցում ներկայացված թեմաներն արդիական են, թեստի սկզբում ներկայացված տեքստերը համապատասխանում են մասնագիտության պահանջներին, վարժությունները կազմված են հետաքրքիր ձևաչափով և ստուգում են դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքն ու հմտությունները:

Ուսումնաօժանդակ ուղեցույցն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: Մեկ գրախոս փորձագետի կողմից ստացվել է դրական եզրակացություն: Մյուս գրախոս փորձագետի եզրակացությունը վերադարձվել է հեղինակին թերությունները շտկելու կամ պարզաբանումներ ներկայացնելու համար: Հեղինակի դիտարկումները ներկայացվելուց հետո ուսումնաօժանդակ ուղեցույցն ուղարկվել է կրկնակի գրախոսության և գրախոս փորձագետի կողմից ստացվել է դրական եզրակացություն:

Ուսումնաօժանդակ ուղեցույցի վերաբերյալ ստացվել են նաև երկու ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Իրինա Սերգեյի Մխիթարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

2. Լիլիթ Գարեգինի Ավդալյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս:

Հրատարակության ներկայացված ուսումնաօժանդակ ուղեցույցը կազմված է ներկայացվող պահանջներին համապատասխան, ունի կուռ կառուցվածք, հագեցած է հետաքրքիր և արդիական տեքստերով և առաջադրանքներով, որոնք կնպաստեն ուսանողների՝ ավելի համապարփակ գիտելիքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել լեզուների ամբիոնի 2024 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 7) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով մեկ արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետի դրական եզրակացությունը, մեկ արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետի կրկնակի գրախոսության դրական եզրակացությունը, երկու ներքին գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants (Practice File)» անգլերենի ուսումնաօժանդակ ուղեցույցը երաշխավորել հրատարակության**: Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Հ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ե. Հ. Գարբինյան**

2024 թ. հունիսի 24
Երևան